ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստը բաղկացած է 34 առաջադրանքից, որոնք, ըստ քննվող նյութի թեմաների, առաջադրանքների կառուցվածքային տեսակների և առաջադրանքներին տրվող միավորների, բաշխված են հետևյալ համամասնությամբ՝

1. Առաջադրանքների կառուցվածքային և բովանդակային տեսակները ու դրանց տրվող միավորները.

տեսակը	**քանակը**	**միավորը**	**բովանդակային տեսակը**		**բովանդակային տեսակը**	
			հայոց լեզու		**հայ գրականություն**	
			քանակը	**միավորը**	**քանակը**	**միավորը**
ընտրովի պատասխանով	25	25	22	22	22	22
կարճ պատասխանով	8	11	5	5	5	5
ընդարձակ պատասխանով	1	4	1	1	1	1
ընդամենը	34	40	28	28	28	28

2. Առաջադրանքների բովանդակային տեսակները և դրանց տրվող միավորները.

տեսակը	**քանակը**	**միավորը**
հայոց լեզու	28	33
• հնչյունաբանություն ուղղագրություն	4	4
• բառագիտություն	5	5
• ձևաբանություն	6	6
• շարահյուսություն	9	9
• կետադրություն	1	3
• կապակցված խոսք	2	2
• շարադրություն	1	4
հայ գրականություն	6	7
ընդամենը	34	40

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ
ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԸ

Առաջադրանքները ներառում են հանրակրթական դպրոցի 7-9-րդ դասարանների «Հայ գրականություն» դասագրքերում ամփոփված հայ գրականության ծրագրային նյութը(7-րդ դասարանի նյութը՝ ընտրովի):

Եղիշե Չարենց- «Էլի գարուն կգա, կբացվի վարդը»

«Ես իմ անուշ Հայաստանի»

«Դեպի լյառը Մասիս»

«Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում»

Դերենիկ Դեմիրճյան- «Ավելորդը»

Պարույր Սևակ- «Վարք մեծաց»

«Եվ այր մի՝ Մաշտոց անուն»

Համո Սահյան- «Անտառում»

«Մասրենի»

«Ախր ես ինչպե՞ս…»

«Պարույր Սևակին»

Ակսել Բակունց- «Սպիտակ ձին»

«Մթնաձոր»

Հրանտ Մաթևոսյան- «Կանաչ դաշտը»

Հովհաննես Թումանյան- Կյանքը, ստեղծագործությունը

«Թմկաբերդի առումը»

«Փարվանա»

«Սասունցի Դավիթ»

Քառյակներ

Մուրացան- «Առաքյալը» (դասագրքի հատվածները)

Ավետիք Իսահակյան- Կյանքը, ստեղծագործությունը

«Մի մրահոն աղջիկ տեսա»

«Հավերժական սերը»

«Ռավեննայում»

	«Սաադիի վերջին գարունը»
Շիրվանզադե-	«Արտիստը» (դասագրքի հատվածները)
Վահան Տերյան-	«Տխրություն»
	«Հրաժեշտի գազել»
	«Երկիր Նաիրի» շարքը
Նար-Դոս-	«Նեղ օրերից մեկը»
	«Ես և նա»
Միսաք Մեծարենց-	«Սիրերգ»
	«Ձմրան պարզ գիշեր»
	«Աքասիաներու շուքին տակ»
	«Հյուղը»
Գրիգոր Զոհրապ-	«Այրին»
Դանիել Վարուժան-	«Ձոն»
	«Ցորյանի ծովեր»
	«Կարոտի նամակ»
	«Անդաստան»
«Սասնա ծռեր»-	(դասագրքի հատվածները)
Գրիգոր Նարեկացի-	«Մեղեդի ծննդյան» (աշխարհաբարով)
	«Տաղ վարդավառի» (աշխարհաբարով)
Ներսես Շնորհալի-	«Առավոտ լուսոյ»
Նահապետ Քուչակ-	Հայրեններ
Սայաթ-Նովա-	«Աշխարումս ախ չիմ քաշի»
Խաչատուր Աբովյան-	«Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբան»-ը
Միքայել Նալբանդյան-	«Ազատություն»
	«Իտալացի աղջկա երգը»
Ռափայել Պատկանյան-	«Արաքսի արտասունքը»
	«Օրորոցի երգ»
Գաբրիել Սունդուկյան-	«Պեպո» (դասագրքի հատվածները)

Պետրոս Դուրյան- «Լճակ»

«Սիրել»

«Տրտունջք»

«Իմ ցավը»

Ռաֆֆի- «Խենթը» (դասագրքի հատվածները)

Գրականագիտություն- Հասկացողություն պոեմի մասին

Հասկացողություն բալլադի մասին

Հասկացողություն քառյակի մասին

Հասկացողություն տաղաչափության մասին

Բանաստեղծության ենթատեսակները

Հասկացողություն բանաստեղծական շարքի մասին

Հասկացողություն նովելի մասին

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ընտրովի պատասխանով առաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Կարճ պատասխանով առաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Եթե այդ առաջադրանքները ենթահարցերով են, ապա յուրաքանչյուր ենթահարցի ճիշտ պատասխանի համար տրվում է 1-ական միավոր:

Կետադրության վերաբերյալ առաջադրանքի յուրաքանչյուր ճիշտ կետադրական նշանի համար՝ 1 միավոր (ընդամենը՝ 3 միավոր): Եթե տվյալ կետադրական կանոնը պահանջում է 2 կետադրական նշան (օրինակ՝ հետադաս ծավալուն որոշիչը՝ բութ և ստորակետ), ապա 1 միավոր է տրվում այն դեպքում, եթե 2 նշանն էլ ճիշտ են դրված:

Ցանկացած այլ (ավելորդ կամ սխալ) կետադրական նշաններից յուրաքանչյուրի գործածության դեպքում այս առաջադրանքին տրվելիք միավորներից հանվում է մեկական միավոր:

Եթե հանվելիք միավորների թիվը 3 և ավելի է, ապա առաջադրանքին միավոր չի տրվում, սակայն թեստի ընդհանուր միավորներից միավոր չի հանվում:

Ընդարձակ պատասխանով առաջադրանքին տրվող առավելագույն միավորը 4-ն է:

Կապակցված խոսքին միավոր չի տրվում, եթե՝

- խոսքը չունի ամփոփ, ավարտուն տեսք, սկիզբ, միջին մաս, ավարտ,
- նախադասությունների (5-7) կամ բառերի (50-60) քանակը չի համապատասխանում պահանջվածին,
- գործածված չեն տրված բառերից առնվազն 7-ը:

Առավելագույն միավորից միավոր է հանվում հետևյալ դեպքերում՝

կա 1-2 ուղղագրական սխալ՝ 1 միավոր, 3 և ավելի՝ 2 միավոր,

- կա 2-4 կետադրական սխալ՝ 1 միավոր, 5 և ավելի՝ 2 միավոր,
- կա 1-2 սխալ կամ ոճականորեն չպատճառաբանված բառագործածություն՝1 միավոր, 3 և ավելի՝ 2 միավոր,

- կա բառի քերականական ձևի, խնդրառության, համաձայնության կամ շարադասության 1-2 սխալ՝ 1 միավոր, 3 և ավելի՝ 2 միավոր,
- նախադասությունների միջև առկա է տրամաբանական կապի խախտման կամ ստորոգյալների ժամանակային ձևերի չպատճառաբանված անհամաձայնության՝ 1-2 դեպք՝ 1 միավոր, 3 և ավելի՝ 2 միավոր:

Եթե հանվելիք միավորների թիվը 4 և ավելի է, ապա առաջադրանքին միավոր չի տրվում, սակայն թեստի ընդհանուր միավորներից միավոր չի հանվում: